

գործերում (յճ) : Սակայն այդ բոլորով հանդերձ՝ նրանք չունին բնիկ Լուսաւորչական հայի իրաւահասարակութիւնը :

Ամենից առաջ՝ նրանք անշարժ կայք զնելու եւ վաճառելու իրաւունքը չունին : Օրէնքը բացարձակօրէն արգիլում է այդ : «Ամենայն բնութիւն մարդոյ, ծնեալ ի յերեսս երկրին հայոց անօրէն»), եւ եթէ ծնեալ ի տար աշխարհ եւ պանդխտացեալ ի հայս, կարող է վարձու ստանալ երկիր եւ տուն եւ բնակութիւն ժամանակաւոր . ոչ խոստանացի նմա զնել եւ ոչ ժառանգութիւն եւ ոչ արժանի վաճառելն նորա, բայց ունենալով նմա երկիր եւ տուն վարձու, հատուցանելով վարձն բնակութեան տան իւրոյ առ տեան տան եւ հարկ եւ մաքս եւ հասեալն առ տանն հայոց» (Թ. .) :

Երկրորդ՝ նրանք զրկուած են բոլոր քաղաքական իրաւունքներէրց, չեն կարող ոչ ընտրել, ոչ էլ ընտրուել պետական պաշտօններէ համար :

Եթէ գուցէ կարելի էր մի փոքր կասկածիլ ընտրելու մասին, սակայն ընտրուելու մասին այլեւս ոչ մի կասկածի տեղիք չի մնում, որովհետեւ ընտրուելու համար — գոնէ պետական բարձր պաշտօններէ համար — օրէնքը զնում է երեք հրամայական պայման . ա) որ ընտրուողը պէտք է լինի հայ, բ) պէտք է լինի բնիկ Հայաստանցի կամ Հայաստանի հպատակ, եւ գ) պէտք է լինի Լուսաւորչական (Լ.Գ., Մ.Գ., ՄԵ. .) :

Հեղինակի այս ժխտական վերաբերմունքը դէպի Հայաստանցի օտար ազգութիւնների եւ օտար դաւանութիւնների քաղաքական իրաւունքները բղխում է այն հիմնական սկզբունքից, որ նա ունի ընդհանրապէս ազգութիւնների եւ նրանց հայրենիքների մասին :

Նրա կարծիքով՝ իւրաքանչիւր ազգութիւն ունի իր սեփական երկիրը կամ, ինչպէս ինքն

է ասում, իր ժառանգութիւնը, որի նկատմամբ նա նոյն իրաւունքներն ունի, ինչ որ անհատը իր տան նկատմամբ : Հետեւապէս Հայաստանի բնիկ ոչ-հայը կամ դրսից եկած «պանդխտացեալը» ունին իրենց իսկական հայրենիքները, ուր նրանք նոյն իրաւունքներն են վայելում, ինչ որ հայը իր հայրենիքում : Հայաստանը նրանց համար, իրաւաբանօրէն եւ պատմականօրէն, հայրենիք չէ, այլ մի ժամանակաւոր կայան, ուր նրանք իրբեւ հիւր ապրում են, վայելելով հիւրին յատուկ բոլոր իրաւունքներն ու ազատութիւնները, սակայն երկրի կառավարութեան մէջ որեւէ մասնակցութիւն չունենալով :

Պէտք է նաեւ նկատել, որ հեղինակը Հայաստանում եղած բոլոր կրօնների ու դաւանութիւնների հանդէպ եւս միեւնոյն վերաբերմունքը չունի : Այդ կրօններն ու դաւանութիւնները նոյնպէս երկու խմբի են բաժանուած նրա համար — հայ Լուսաւորչական եւ օտար դաւանութիւններ : Լուսաւորչական եկեղեցին վայելում է պետական եկեղեցու բոլոր իրաւունքներն ու արտօնութիւնները : Նա մի ինքնավար հաստատութիւն է, մի պետութիւն պետութեան մէջ : Ոչ պետութիւնը, ոչ էլ ժողովրդից մէկն ու մէկը իրաւունք չունին խառնուելու եկեղեցու գործերում, բացի երէցպիոյսի ընտրութիւնից (ձծե) : Թէեւ փոխադարձաբար եկեղեցականներին էլ արգելում է խառնուել աշխարհական գործերում (ձծդ), բայց եւ այնպէս միանգամայն պարզ է, որ Լուսաւորչական եկեղեցին միւս դաւանութիւններին հաւասար մի մակարդակի վրայ չի դնուում :

Դրա մի անհերքելի ապացոյցն արդէն տեսանք վերեւ — որ բոլոր պետական բարձր պաշտօնների համար ընտրելիները անպայմանօրէն Լուսաւորչական դաւանութեան պիտի պատկանին : «Որ. Փոռաց» ի մէջ այդ ուղղութեամբ բազմաթիւ յօդուածներ կը գտնենք, ինչպէս օրինակ, որ հայոց Հայրապետի ներկայացուցիչը Աղգային ժողովում հանրապետութեան նախագահից յետոյ « Երկրորդ տանուակէն» է եւ երկու ձայն ունի (Ժէ, մլդ) . կամ՝ «Հայոց Հայրապետի Ս. Աթոռին», ինչպէս նաեւ բոլոր վանքերին ու եկեղեցիներին առատ հողեր է տալիս, ազատում է հայ հողեւորականութիւնը եւ նրանց կալուածքները բո-

1) Պօսքը բնիկ Հայաստանցի մահճեղականների մասին է, չնայած որ յն յօդուածում «անօրէն» բառից յետոյ զնում է «եթէ հեթանոս, եթէ մահճեղական, եթէ երբայեցի եւն» :

2) «Հայոց տուն» կամ Ցան Հայոց» հեղինակն անուանում է հայոց պետութիւնը, Հայաստանի ազգային ժողովը կամ պարլամենտը, Հայաստանի կառավարութիւնը եւ երբեմն նաեւ երկիրը :